

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՂՎԱՐԴ ԶԱՄԱՅՆՔ

26.05.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Զարուբյուկյանն այցելել է Եղվարդ համայնք: Այցելության շրջանակներում մարզպետը հանդիպում է ունեցել Եղվարդի քաղաքապետարանում, այնուհետև քաղաքապետ Ն. Սարգսյանի ուղեկցությամբ շրջայց կատարել քաղաքում:

Կոտայքի մարզպետ Ա. Զարուբյուկյանը տեղում ծանոթացել է համայնքային ենթակառուցվածքների գործունեությանը, զրուցել բնակիչների հետ, ինչպես նաև համայնքային ծառայողների հետ համատեղ քննարկել Եղվարդ քաղաքի զարգացման հեռանկարային ուղղություններին և ծրագրերին վերաբերող հարցեր:

Հիշյալ շրջայցի ընթացքում Կոտայքի մարզպետն այցելել է նաև Եղվարդի մարզադպրոց, ծանոթացել ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ նոր հիմնանորոգված հաստատության շենքային, ինչպես նաև պատանիների մարզական ուսուցումը կազմակերպելու համար ստեղծված տեխնիկական հնարավորություններին:

Այցելության ավարտին ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Զարուբյուկյանն այցելել է <<Նաիրիի բժշկական կենտրոն>> ՓԲԸ, հանդիպում ունեցել բուժանձնակազմի հետ, պատասխանել բարձրացվող հարցերին՝ անդրադարձ կատարելով առողջապահական հաստատության շենքային պայմանների բարելավմանն ու անհրաժեշտ բուժսարքավորումներով հագեցվածությանը վերաբերող խնդիրներին, միաժամանակ նկատելով, որ բժշկական կենտրոնը պետք է իր գործունեությունն իրականացնի ամբողջական ծավալներով և ապահովի տեղի բնակչության պատշաճ բուժապասարկումը: